# ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

**Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագները հաշվարկվում եւ սահմանվում են «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածով ամրագրված սկզբունքների, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներով հաստատված սակագների հաշվարկման մեթոդիկաների եւ կանոնների հիման վրա, ինչպես նաեւ հաշվի են առնվում պետություն-մասնավոր հատված գործընկերության ծրագրերի շրջանակում կնքված համաձայնագրերի պահանջները:**

## Էլեկտրաէներգիայի արտադրության, հաղորդման եւ բաշխման գործընթացը



- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերջին անգամ վերանայվել եւ ուժի մեջ են մտել 2019 թվականի փետրվարի 1-ից, իսկ սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի սակագները՝ 2017 թվականի փետրվարի 1-ից, բացառությամբ սոցիալապես անապահով սպառողների, որոնց սակագները վերջին անգամ վերանայվել են 2019 թվականի փետրվարի 1-ից:
- Համաձայն «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի՝ էլեկտրաէներգիայի սակագները կարող են վերանայվել 6 ամսից ոչ շուտ, սակայն ՀԾԿՀ-ն սովորաբար էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները վերանայում է տարեկան արդյունքներով:
- Հաշվի առնելով նշվածը՝ 2019 թվականի սեպտեմբերի 10-ից ՀԾԿՀ-ի նախաձեռնությամբ սկսվել է էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների, ծառայություններ մատուցողների սակագների եւ բաշխողի սակագնային մարժայի վերանայման գործընթաց:

**2020թ. փետրվարի 1-ից մինչեւ 2021թ. փետրվարի 1-ն ընկած ժամանակահատվածի համար էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների սակագների վրա ազդեցություն ունեցող գործոնները դասակարգենք հետեւյալ հիմնական խմբերում՝**

- **էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն,**
- **կուտակված մաշվածության արդյունքում շահույթի նվազում,**
- **իրականացված նոր կապիտալ ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում,**
- **ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն,**
- **միջուկային վառելիքի եւ դրա պահպանմանն ուղղված ծախսերի փոփոխություն,**
- **գույքի մասնավորեցման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման արդյունքում մաշվածության եւ շահույթի նվազում,**
- **անհուսալի դեբիտորական պարտքի նորմայի նվազեցում,**
- **ՀԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի սակագնային մարժաների տարբերության փոխհատուցում,**
- **արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխություն,**
- **ՎԷ ռեսուրսներով գործող էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագների աճ,**
- **այլ ծախսային հոդվածների փոփոխություն:**

**Սակագների հաշվարկների հիմքում դրվող էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման կանխատեսվող հաշվեկշիռը կազմվում է ՀԾԿՀ-ի 09.08.2017թ. №344Ն որոշմամբ հաստատված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առեւտրային կանոնների 3-րդ բաժնի համաձայն:**

**ՀԷՑ**
(սպառման կանխատեսում)

**Հաշվարկային կենտրոն**
(հաղորդման ցանցի կորուստների եւ մինչև 30ՄՎտ կայանների արտադրության կանխատեսում)

**30 ՄՎտ-ից ավել կայաններ**
(արտադրության կանխատեսում)

**Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր**
(էլեկտրաէներգիայի կանխատեսվող տարեկան հաշվեկշռի կազմում)

**ՀԾԿՀ**
(կանխատեսվող տարեկան հաշվեկշռի կիրառում սակագների հաշվարկներում)

Այսպիսով, 01.02.2020-01.02.2021թթ. ժամանակահատվածի համար կազմված **էլեկտրաէներգիայի արտադրության եւ սպառման հաշվեկշիռը (կառուցվածքի փոփոխությունը)** համակարգի վրա ունեցել է **դրական ազեցություն՝ շուրջ 8.3 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական **սպառողների վաճառքի միջին սակագինը նվազեցնում է 1.78 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

***Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը***

| № | Անվանումներ | 01.02.2019-01.02.2020 սակագնային տարի | 01.02.2020-01.02.2021 սակագնային տարի | Տարբերություն |
|---|---|---|---|---|
| | | մլն կՎտժ | մլն կՎտժ | մլն կՎտժ |
| **1** | **ԸՆԴԱՄԵՆԸ էլեկրաէներգիայի առաքում, այդ թվում՝** | **5965.28** | **6450.98** | **+485.7** |
| *1.1* | *«ՀԱԷԿ» ՓԲԸ* | *2092.30* | *2501.70* | *+409.4* |
| *1.2* | *«Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ* | *1008.09* | *939.24* | *-68.85* |
| *1.3* | *«Հրազդան-5» կայան* | *422.97* | *426.80* | *+3.83* |
| *1.4* | *«ՀրազՋԷԿ» ԲԲԸ* | *70.92* | *150.54* | *+79.62* |
| *1.5* | *«ՄԷԿ» ՓԲԸ* | *380.00* | *380.00* | *0.0* |
| *1.6* | *«ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ» ՓԲԸ* | *974.12* | *836.00* | *-138.12* |
| *1.7* | *Փոքր կայաններ եւ ներկրում* | *1016.88* | *1216.71* | *+199.83* |
| **2** | **Կորուստները հաղորդման ցանցում** | **104.81** | **112.26** | **+7.45** |
| **3** | **Մուտքը բաշխիչ ցանց** | **5860.47** | **6338.72** | **+478.25** |

Արտադրող կայաններից ներքին շուկայի պահանջարկի բավարարման համար առաքվող էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

***01.02.2019-01.02.2020 սակագնային տարի***




***01.02.2020-01.02.2021 սակագնային տարի***



Արտադրող կայաններից առաքվող (ներառյալ արտահանման նպատակով) էլեկտրաէներգիայի կառուցվածքի փոփոխությունը

***01.02.2019-01.02.2020 սակագնային տարի***




***01.02.2020-01.02.2021 սակագնային տարի***



Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների հաշվարկում **կուտակված մաշվածության արդյունքում շահույթը նվազել է շուրջ 0.9 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.2 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

***մլն դրամ***



Իրականացված նոր **կապիտալ ներդրումների արդյունքում** մաշվածության և շահույթի գումարները **ավելացել են շուրջ 3.5 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինն **ավելացնում է 0.75 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

***մլն դրամ***



ՀՀ կառավարության երաշխիքով ստացված արտոնյալ **վարկերի մայր գումարների մարման եւ սպասարկման ծախսերն ավելացել են շուրջ 9.3 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **ավելացնում է 2.0 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

***մլն դրամ***



«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ում **միջուկային վառելիքի** ձեռքբերման եւ դրա պահպանմանն ուղղած ծախսերը, գործող սակագնի հաշվարկում ներառված ծախսերի նկատմամբ, **նվազել են շուրջ 1 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի)՝ վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնելով 0.21 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Միջուկային վառելիքի ծախսի նվազում

**507 մլն դրամ**

Միջուկային վառելիքի պահպանման ծախսի նվազում

***477 մլն դրամ***

**Ընդամենը**

**984 մլն դրամ**

ՀՀ ԱԺ-ի կողմից 04.12.2002թ. վավերացված ՀՀ սեփականություն հանդիսացող Հրազդանի ՋԷԿ-ի գույքային համալիրը ՌԴ-ին սեփականություն փոխանցելու վերաբերյալ ՀՀ և ՌԴ կառավարությունների միջև կազմված արձանագրությամբ նախատեսված գույքի ձեռքբերման արժեքի վերադարձն ամբողջությամբ ապահովելու արդյունքում «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ում մաշվածությունը և շահույթը **նվազել է 1.12 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի):

Նշված կրճատումը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.24 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

ՀՀ ՀԾԿՀ 29.05.2019թ. №158Ա որոշմամբ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի լիցենզիայի պայմաններում կատարվել է փոփոխություն՝ 2020 թվականի համար անհուսալի դեբիտորական պարտքի **նորմայի մեծությունը նվազեցնելով 0,2 տոկոսային կետով**: Արդյունքում, ընկերության սակագնային մարժայի հաշվարկներում **անհուսալի դեբիտորական պարտքի գծով ծախսը նվազել է 0.37 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.08 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

01.11.2018-01.11.2019 ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի փաստացի եւ հաշվարկային սակագնային մարժաների տարբերության հետեւանքով ձեւավորվել է լրացուցիչ օգուտ, որն ընկերության սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի համաձայն՝ հաշվարկվել է շուրջ **0.7 մլրդ դրամ**:

Միեւնույն ժամանակ, 2019թ. սակագնային մարժայի հաշվարկներում ընկերության հասույթից արդեն իսկ նվազեցված է շուրջ **2.2 մլրդ դրամ** նախորդ տարիներն ձեւավորված լրացուցիչ օգուտը, որը պետք է դուրս գա հաշվարկներից եւ փոխարենը ներառվի **0.8 մլրդ դրամ** նվազեցումը:

Ուստի, 01.02.2020-01.02.2021թթ. ժամանակահատվածի սակագնային մարժայի հաշվարկներում էլեկտրաէներգիայի արտադրության կանխատեսված եւ փաստացի հաշվեկշիռների շեղումների արդյունքում **լրացուցիչ ծախսը կազմում է շուրջ 1.5 մլրդ դրամ**, որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը ավելացնում է 0.32 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

# 2247,3 - 753,3 = + 1494,0 մլն դրամ

Արտարժույթների նկակտմամբ ՀՀ դրամի փոխարժեքի փոփոխությունները էլեկտրաէներգետիկական համակարգի համար ունեցել են դրական ազդեցություն **շուրջ 1,8 մլրդ դրամի** չափով (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.4 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

$ — 487,16 ⟶ 476,46

€ — 557,21 ⟶ 531,16

¥ — 4,321 ⟶ 4,410

**ՎԷ ռեսուրսներով** գործող էլեկտրաէներգիա արտադրող կայանների սակագների աճի արդյունքում նշված **կայաններից** էլեկտրաէներգիայի **գնման ծախսն ավելանում է շուրջ 0.4 մլրդ դրամով** (առանց ԱԱՀ-ի), որը վերջնական սպառողների վաճառքի միջին **սակագինը ավելացնում է 0.09 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):



Էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ **ծախսային հոդվածների վերանայման արդյունքում,** բացի վերը նշված գործոններից, **շուրջ 1.2 մլրդ դրամով (առանց ԱԱՀ-ի) ծախսերի** կրճատումը վերջնական սպառողների վաճառքի միջին սակագինը **նվազեցնում է 0.25 դրամ/կՎտժ-ով** (ներառյալ ԱԱՀ-ն):

Այսպիսով՝

## «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«Հայկական ԱԷԿ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **24038.23** | **30431.66** | **+6393.43** |
| 1.1 | *Վառելիքի ծախս* | *մլն դրամ* | *6540.59* | *6033.36* | *-507.23* |
| 1.2 | *Վառելիքի պահպանմանն ուղղված ծախսեր* | *մլն դրամ* | *1080.47* | *603.85* | *-476.62* |
| 1.3 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *6408.00* | *6408.00* | *0.00* |
| 1.4 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *3550.19* | *3693.72* | *+143.53* |
| 1.5 | *Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր* | *մլն դրամ* | *4434.73* | *11864.89* | *+7430.16* |
| 1.6 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *207.62* | *197.03* | *-10.59* |
| 1.7 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *1816.63* | *1630.81* | *-185.82* |
| **2** | **Էլեկտրական էներգիայի առաքում** | **մլն կՎտժ** | **2092.30** | **2501.70** | **+409.4** |
| **3** | **Միադրույք հաշվարկային սակագին** | **դր/կՎտժ** | **11.489** | **12.164** | **+0.675** |

## «Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«Երեւանի ՋԷԿ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **29287.95** | **26406.67** | **-2881.28** |
| 1.1 | *Վառելիքի ծախս* | *մլն դրամ* | *16233.02* | *14273.79* | *-1959.23* |
| 1.2 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *520.80* | *520.80* | *0.0* |
| 1.3 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *2806.28* | *2278.40* | *-527.88* |
| 1.4 | *Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր* | *մլն դրամ* | *4874.13* | *4774.43* | *-99.70* |
| 1.5 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *1839.95* | *1778.01* | *-61.94* |
| 1.6 | *«Տրանսգազ», «Գազպրոմ Արմենիա», «ԲԷՑ», «ԷԷՀՕ» եւ «Հաշվարկային կենտրոն» ընկերությունների մատուցած ծառայության դիմաց վճարումներ* | *մլն դրամ* | *2596.08* | *2636.87* | *+40.80* |
| 1.7 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *417.69* | *144.37* | *-273.33* |
| **2** | **Էլեկտրական էներգիայի առաքում** | **մլն կՎտժ** | **1008.09** | **939.24** | **-68.85** |
| **3** | **Միադրույք հաշվարկային սակագին** | **դր/կՎտժ** | ***29.053*** | ***28.115*** | **-0.938** |

## «ՀրազՁԷԿ» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«ՀրազՁԷԿ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **5659.57** | **6738.60** | **+1079.03** |
| 1.1 | *Վառելիքի ծախս* | *մլն դրամ* | *2246.13* | *4662.93* | *+2416.80* |
| 1.2 | *Պարապուրդում գնվող սարքավորումներն աշխատունակ վիճակում պահելու ծախս* | *մլն դրամ* | *183.50* | *99.53* | *-83.97* |
| 1.3 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *1420.80* | *1420.80* | *0.0* |
| 1.4 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *154.23* | *254.61* | *+100.39* |
| 1.5 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *1176.87* | *56.58* | *-1120.29* |
| 1.6 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *478.05* | *244.15* | *-233.90* |
| **2** | **Էլեկտրական էներգիայի առաքում** | **մլն կՎտժ** | **70.92** | **150.54** | **+79.62** |
| **3** | **Միադրույթ հաշվարկային սակագին** | **դր/կՎտժ** | ***79.802*** | ***44.764*** | **-35.038** |

## «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«Հրազդան-5» կայան** | **մլն դրամ** | **13391.57** | **13296.43** | **-95.14** |
| 1.1 | *Վառելիքի ծախս* | *մլն դրամ* | *10140.50* | *10007.56* | *-132.93* |
| 1.2 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *475.80* | *487.21* | *+11.41* |
| 1.3 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *903.77* | *925.45* | *+21.68* |
| 1.4 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *1770.74* | *1782.22* | *+11.48* |
| 1.5 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *100.78* | *93.99* | *-6.78* |
| **2** | **Էլեկտրական էներգիայի առաքում** | **մլն կՎտժ** | **422.97** | **426.80** | **+3.83** |
| **3** | **Միադրույք հաշվարկային սակագին** | **դր/կՎտժ** | ***31.661*** | ***31.154*** | **-0.507** |

## «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«ՄԷԿ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **6456.90** | **6085.76** | **-371.14** |
| 1.1 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *1099.20* | *1099.20* | *0.0* |
| 1.2 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *857.19* | *973.48* | *+116.29* |
| 1.3 | *Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր* | *մլն դրամ* | *530.37* | *365.44* | *-164.93* |
| 1.4 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *3398.51* | *3117.70* | *-280.81* |
| 1.5 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *571.63* | *529.94* | *-41.68* |
| **2** | **Էլեկտրական էներգիայի առաքում** | **մլն կՎտժ** | **380.0** | **380.0** | **0.0** |
| **3** | **Միադրույք հաշվարկային սակագին** | **դր/կՎտժ** | ***16.992*** | ***16.015*** | **-0.977** |

## «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ-ի հասույթի փոփոխություն

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Քոնթուրգլոբալ Հիդրո Կասկադ» ՓԲԸ | մլն դրամ | 14605.71 | 14551.22 | -54.49 |
| 2 | Էլեկտրական էներգիայի առաքում | մլն կՎտժ | 974.12 | 836.0 | -138.12 |
| 3 | Միադրույթ հաշվարկային սակագին | դր/կՎտժ | *14.994* | *17.406* | +2.412 |

## Փոքր կայաններից ձեռքբերվող եւ ներկրվող էլեկտրաէներգիայի ծախսի փոփոխություն

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Փոքր կայաններ եւ ներկրում | մլն դրամ | 22975.76 | 28530.49 | +5554.73 |
| 2 | Էլեկտրական էներգիայի առաքում | մլն կՎտժ | 1016.88 | 1216.71 | +199.83 |
| 3 | Միադրույթ հաշվարկային սակագին | դր/կՎտժ | *22.594* | *23.449* | +0.854 |

## «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«ԲԷՑ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **7340.71** | **7331.32** | **-9.4** |
| 1.1 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *2112.00* | *2112.00* | *0.0* |
| 1.2 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *737.14* | *311.37* | *-425.76* |
| 1.3 | *Վարկի մարման եւ սպասարկման ծախսեր* | *մլն դրամ* | *4237.12* | *4680.74* | *+443.62* |
| 1.4 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *39.17* | *35.40* | *-3.78* |
| 1.5 | *Այլ ծախսեր* | *մլն դրամ* | *215.29* | *191.81* | *-23.48* |
| **2** | **Ներքին շուկայից (ՀԷՑ) ստացվող հասույթ** | **մլն դրամ** | **6005.68** | **6064.9** | **+59.22** |
| **3** | **Ներքին շուկայի համար էլեկտրաէներգիայի հաղորդում** | **մլն կՎտժ** | **4948.39** | **5267.95** | **+319.55** |
| **4** | **Սակագին** | **դր/կՎտժ** | ***1.2137*** | ***1.15128*** | **-0.06242** |

## «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի հասույթի փոփոխություն

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԷԷՀՕ» ՓԲԸ | մլն դրամ | 1921.34 | 2016.98 | +95.64 |
| 2 | Ներքին շուկայից (ՀԷՑ) ստացվող հասույթ | մլն դրամ | 1622.21 | 1723.15 | +100.95 |
| 3 | Ծառայության ամսական վճար | մլն դրամ | *135.1840* | *143.5961* | +8.4121 |

## «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ի հասույթի փոփոխություն

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ | մլն դրամ | 295.13 | 327.62 | +32.5 |
| 2 | Ներքին շուկայից (ՀԷՑ) ստացվող հասույթ | մլն դրամ | 249.18 | 279.89 | +30.7 |
| 3 | Ծառայության ամսական վճար | մլն դրամ | *20.7648* | *23.3245* | +2.5597 |

## «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի ծախսային հոդվածներում տեղի ունեցած փոփոխություններ

*առանց ԱԱՀ-ի*

| № | Անվանումներ | Չափի միավոր | 01.02.2019-01.02.2020 սակագին | 01.02.2020-01.02.2021 սակագին | Տարբերություն |
|---|---|---|---|---|---|
| **1** | **«ՀԷՑ» ՓԲԸ** | **մլն դրամ** | **47023.4** | **51008.5** | **+3985.1** |
| 1.1 | *Աշխատավարձ* | *մլն դրամ* | *18734.40* | *18734.40* | *0.0* |
| 1.2 | *Նորոգման եւ նյութական ծախսեր* | *մլն դրամ* | *4436.04* | *4445.46* | *+9.42* |
| 1.3 | *ՇՊԾ այլ ծախսեր* | *մլն դրամ* | *3769.59* | *3769.59* | *0.0* |
| 1.4 | *Անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ծախս* | *մլն դրամ* | *1713.16* | *1480.94* | *-232.22* |
| 1.5 | *Մաշվածություն եւ շահույթ* | *մլն դրամ* | *20617.47* | *23331.34* | *+2713.87* |
| 1.6 | *Փոխհատուցման ենթակա գումար* | *մլն դրամ* | *-2247.26* | *-753.25* | *+1494.01* |
| **3** | **Ներքին շուկայում էլեկտրաէներգիայի իրացում** | **մլն կՎտժ** | **5192.2** | **5618.6** | **-326.1** |
| **4** | **Սակագնային մարժա** | **դր/կՎտժ** | ***11.786*** | ***11.790*** | **+0.004** |

# Էլեկտրաէներգիայի սակագների վրա ազդող գործոնները

| | ԴՐԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒՅՈՒՆ | ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒՅՈՒՆ |
|---|---|---|
| Արտադրության եւ սպառման կառուցվածքի փոփոխություն | - 1.78 դրամ/կՎտժ | |
| Կուտակված մաշվածության արդյունքում շահույթի նվազում | - 0.2 դրամ/կՎտժ | |
| Միջուկային վառելիքի մասով ծախսերի փոփոխություն | - 0.21 դրամ/կՎտժ | |
| ՀրազՁԷԿ-ի մաշվածության եւ շահույթի նվազում | - 0.24 դրամ/կՎտժ | |
| ՀԷՑ-ում անհուսալի դեբիտորական պարտքի կրճատում | - 0.08 դրամ/կՎտժ | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխություն | - 0.4 դրամ/կՎտժ | |
| Այլ ծախսերի փոփոխություն | - 0.25 դրամ/կՎտժ | |
| Նոր ներդրումների արդյունքում մաշվածության եւ շահույթի ավելացում | | + 0.75 դրամ/կՎտժ |
| Վարկերի մարման եւ սպասարկման ծախսերի փոփոխություն | | + 2.0 դրամ/կՎտժ |
| ՀԷՑ-ի հաշվարկային եւ փաստացի սակագնային մարժայի տարբերություն | | + 0.32 դրամ/կՎտժ |
| ՎԷՌ կայանների սակագների աճ | | + 0.09 դրամ/կՎտժ |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ազդեցությունը** | **0 դրամ/կՎտժ** | |

# Ներքին շուկայում վաճառվող էլեկտրական էներգիայի սակագների կառուցվածքը



## ՀԷՑ-ի կողմից էլեկտրաէներգիայի բաշխման ծառայության մատուցման սակագները *(առանց ԱԱՀ-ի)*

| № | Բաշխման ցանցին միացման լարման մակարդակը | Առաջարկ (01.02.2020-01.02.2021) | |
|---|---|---|---|
| | | դրամ/կՎտժ (առանց ԱԱՀ-ի) | դրամ/կՎտժ (ներառյալ ԱԱՀ-ն) |
| 1 | 110 կՎ լարմամբ միացման համար | 1.875 | 2.250 |
| 2 | 35 կՎ լարմամբ միացման համար | 3.394 | 4.073 |
| 3 | 6(10) կՎ լարմամբ միացման համար | 7.755 | 9.306 |
| 4 | 0.38(0.22) կՎ լարմամբ միացման համար | 14.1375 | 16.965 |

**Արտադրող կայանների եւ ծառայություններ մատուցողների առաջարկվող սակագները *(առանց ԱԱՀ-ի)***

| Անվանում | Դրույք | Հաշվարկային միադրույք գին |
|---|---|---|
| ՀԱԷԿ | 2.593 դր/կՎտժ | 12.164 դր/կՎտժ |
| | 6019.32 դր/կՎտ/ամիս | |
| ՔոնթուրԳլոբալ Հիդրո կասկադ | 7.327 դր/կՎտժ | 17.406 դր/կՎտժ |
| | 3358.22 դր/կՎտ/ամիս | |
| ՄԷԿ | 4.102 դր/կՎտժ | 16.015 դր/կՎտժ |
| | 954.74 դր/կՎտ/ամիս | |
| Երևանի ՋԷԿ | 16.144 դր/կՎտժ | 28.115 դր/կՎտժ |
| | 4604.67 դր/կՎտ/ամիս | |
| «Հրազդան-5» կայան | 25.536 դր/կՎտժ | 31.154 դր/կՎտժ |
| | 498.05 դր/կՎտ/ամիս | |
| Հրազդանի ՋԷԿ | 31.164 դր/կՎտժ | 44.764 դր/կՎտժ |
| | 438.52 դր/կՎտ/ամիս | |
| Փոքր կայաններ և ներկրում | 23.449 դր/կՎտժ | 23.449 դր/կՎտժ |
| Հաղորդող | 1.15128 դր/կՎտժ | 1.15128 դր/կՎտժ |
| Համակարգի օպերատոր | 143.5961 մլն դրամ/ամիս, 0.2671 դր/կՎտժ | |
| Շուկայի օպերատոր | 23.3245 մլն դրամ/ամիս, 0.0434 դր/կՎտժ | |

# ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ